ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ

«ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ » ԾՐԱԳԻՐ

Ապահովագրված անձին ապահովագրական հատուցումը տրամադրվում է ապահովագրական գումարից հետևյալ չափերով.

№	ՊԱՏԱՀԱՐԻ ՏԵՍԱԿ	ՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՀՄԱՆԱՉԱՓ
1	Մահ դժբախտ պատահարի[1] կամ հիվանդության[2] հետևանքով. «Մահ հիվանդության հետևանքով» ռիսկի նկատմամբ կիրառվում է սպասման ժամկետ[3]՝ 90 օր սկսած պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից:	**100%**
2	Հաշմանդամության 1-ին խումբ դժբախտ պատահարի հետևանքով	**100%**
3	Հաշմանդամության 2-րդ խումբ դժբախտ պատահարի հետևանքով	**70%**
4	Հաշմանդամության 3-րդ խումբ դժբախտ պատահարի հետևանքով	**40%**

---

[1] *Դժբախտ պատահար՝ Պայմանագրով նախատեսված անսպասելի, հանկարծակի իրադարձություն, որը տարբերակվում է ըստ առաջացման բնույթի, վայրի և ժամանակի և որը հանգեցրել է Ապահովագրված անձի մարմնական վնասվածքի (այդ թվում՝ այրվածքի, ցրտահարության) և/կամ սուր թունավորման:*

[2] *Ապահովագրված անձի առողջության վիճակի խախտում, բացառությամբ մարմնական վնասվածքի, կայուն նյարդային կամ հոգեբանական խանգարումների, էպիլեպսիայի, ՄԻԱՎ-ի/ՁԻԱՀ-ի կամ դրանց հետ կապված համախտանիշների կոմպլեքսի (անկախ այն բանից, թե ինչպես է այն ձեռք բերվել), որն առաջին անգամ ախտորոշվել է համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից բժշկագիտությանը հայտնի օբյեկտիվ ախտանիշների և հատուկ հետազոտությունների հիման վրա և առաջին անգամ զարգացել է սույն Պայմանագրի գործողության ընթացքում:*

[3] *Սպասման ժամկետը սկսվում է պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից: Պատահարը համարվում է ոչ ապահովագրական, եթե մահվան հանգեցրած հիվանդությունը ախտորոշվում է նշված ժամկետում:*